ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ամեն մի ժողովրդի պատմության առաջնակարգ հարցերից մեկը նրա ծագման, առաջացման հարցն է։ Հայ ժողովրդի առաջացման խնդիրը երկար պատմություն ունի։ Դեռևս հայոց պատմահայր Մովսես Խորենացին իր «Պատմութիւն Հայոց» հռչակավոր գիրքն սկսում է «Ծննդաբանութիւն Հայոց Մեծաց» բաժնով, որն ըստ էության հայ ժողովրդի առաջացման հարցի քննությանն է նվիրված։ Թե որքան կարևոր ու արժեքավոր է Խորենացու տեսակետը, կարելի է դատել նրանով, որ այդ տեսակետը իշխել է մինչև XIX դարը։

XIX և XX դդ. հայ ժողովրդի առաջացման հարցով զբաղվել են հայ և օտար գիտնականներ, առաջադրվել են տարբեր տեսակետներ ու տեսություններ, սակայն հարցը հիմնավոր լուծում չի ստացել՝ փաստական նյութի սղության, նաև հակասականության պատճառով։ Այդ տեսությունների քննությունը մեզ հեռու կտաներ. նշենք միայն, որ վերջին տասնամյակներում ոչ մասնագետների կողմից առաջադրվել է մի տեսակետ, որով մերժվում է Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. IX—VII դդ. գոյատևած ուրարտական էթնիկ միավորի, ուրարտական պետության գոյության պատմական իրողությունը։ Ուրարտացիները նույնացվում են հայերի հետ, ուրարտական պետությունը համարվում է հայկական պետություն, ուրարտական մշակույթը՝ հայկական մշակույթ, ուրարտերենը՝ նոր խուռիերեն (կամ անգամ հայերեն)։ Իրականում ուրարտները Հայկական լեռնաշխարհի հարավի բնիկներ էին, որոնք զորեղանալով ստեղծեցին իրենց պետությունը, որը բռնեց Հայկական լեռնաշխարհի, ասել է՝ Հայաստանի ամբողջ տարածքը և իր իշխանությանը ենթարկեց երկրի բնիկ բոլոր ցեղերին, որոնցից առավել խոշորներն էին հայկական և խուռի ցեղերն ու ցեղախմբերը։ Ենթարկեցին, սակայն չձուլեցին իրենց հետ։ Ուրարտական պետությունը տարբեր էթնիկ միավորներից բաղկացած խառը կազմով պետություն էր։ Այդ պետության բնիկ և հիմնական էթնիկ տարրերն էին հնդեվրոպական ծագում ունեցող հայ-արմենները, սեմական ծագումով խուռի-սուրարի ցեղախմբերը։ Բացի նրանցից Փոքր Ասիայից թափանցել էին հնդեվրոպական խեթա-լուվիական ցեղերը՝ մուշկերը, հարավռուսական տափաստաններից Մերձավոր Արևելք անցած կիմերների և սկյութների առանձին ցեղեր, որոնք հաստատվել էին Հայկական լեռնաշխարհում։ Իրենք՝ բուն ուրարտները, որոնք ազդակից էին խուռիներին, լեռնաշխարհի բնակչության թվում փոքրամասնություն էին կազմում, բայց պետությունը նրա՛նք ստեղծեցին և ղեկավար դեր էին կատարում նրա մեջ։ Այդ է պատճառը, որ նրանց անունով պետությանը տրվել է Ուրարտական պայմանական անունը։

Իշխող, բայց փոքրաթիվ ուրարտները չկարողացան և չէին կարող երկրում էթնիկ միասնություն ստեղծել։ Ավելին. ուրարտները կանգնած չէին ժողովուրդ կազմավորելու ճանապարհին և զուրկ էին պատմական հեռանկարից։ Ուրարտները իրենք ձուլվեցին հայկական հողում կազմավորվող հայ ժողովրդի մեջ, որը դրսևորվեց նաև նրանց լեզվի մահացմամբ։ Պատմական նույն ճակատագիրը վիճակված էր նաև Հայաստանում բնակվող խուռի և մյուս ցեղախմբերին։ Մինչդեռ միակ առաջատարը և որոշիչը հայկական ցեղերն էին, որոնք ժողովուրդ կազմելու ճանապարհը բռնել էին վաղուց՝ թերս-

մ. թ. ա. III հազարամյակից ոչ ուշ։ Մ. թ. ա. երկրորդ հազարամյակի կեսերին հայ ժողովրդի կազմավորումը նկատելիորեն առաջադիմեց։ Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան տարածքում՝ Հայասա երկրում ձևավորվեց հայկական նույնանուն ցեղային միությունը, որը կանգնած էր պետություն դառնալու նախաշեմին, սակայն Մերձավոր Արևելքում տեղի ունեցած խոշոր պատմական անցքերը խանգարեցին դրան։

Հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը շարունակվում էր և փաստորեն հայերը իբրև ժողովուրդ ձևավորվեցին Ուրարտական պետության իսկ գոյության ժամանակաշրջանում, իրենց մեջ հուլելով և՛ ուրարտներին, և՛ խուռիներին, ինչպես և լեռնաշխարհում գտնվող մյուս ցեղերն ու ցեղախմբերը։ Այսպիսով ուրարտները կազմեցին ձևավորված հայ ժողովրդի, իսկ նրանց պատմությունը և մշակույթը՝ հայոց պատմության և հայկական մշակույթի բաղկացուցիչ մասը։ Ուրարտուի պատմությունը Հայաստանում ուրարտական պետության գոյության և հայ ժողովրդի կազմավորման ավարտին հասնող դարաշրջանի պատմություն է։ Ուստի մ. թ. ա. IX—VII դդ. պատմությունը կարելի է անվանել՝ Հայաստանը Ուրարտական պետության գոյության դարաշրջանում։

Ուրարտուն և նշված պատմական իրողությունը մերժող հեղինակները ակադեմիական պատմաբաններին վերագրում են հայերին դրսից եկվոր համարելու տեսակետը, որը պարզապես թյուրիմացություն է։ Հայերի եկվոր լինելու տեսակետը առաջադրվել է դեռևս XIX դարում հնդեվրոպական լեզվաբանության և պատմագրության կողմից և տիրապետող է եղել, կարելի է ասել, մինչև 1930—1940-ական թթ.։ Սակայն այն մերժվել է ժամանակակից առաջավոր պատմագիտության կողմից դեռևս ավելի քան կես դար առաջ՝ ակադեմիկոսներ Նիկողայոս Մառի, Գրիգոր Ղափանցյանի, Բորիս Պիոտրովսկու, Արարատ Ղարիբյանի և շատ ուրիշների կողմից։ Այդուհանդերձ, այդ տեսությունը ունեցել է իր հետևորդները, նույնիսկ տեղ է գտել հայ ժողովրդի պատմության ութհատորյա ակադեմիական հրատարակության 1971 թ. լույս տեսած 1-ին հատորում։

Հայ ժողովրդի առաջացումը տեղի է ունեցել Հայկական լեռնաշխարհում. դա երկար ճանապարհ անցած իրողություն է, պայմանավորված բաղմակողմանի բարդ, բայց և պատմականորեն օրինաչափ ընթացքով։ Այն տեղի է ունեցել հասարակական-տնտեսական, էթնոգենետիկ կոնկրետ հանգամանքների ու անցքերի պատճառական փոխկապակցված զարգացման շնորհիվ։ Այս ամենի շարքում խոշորագույն նշանակություն է ունեցել հայոց լեզուն, որը, համաձայն պատմալեզվաբանական գիտության տվյալների, հնդեվրոպական հնագույն լեզուներից մեկն է։

Հայ ժողովրդի առաջացման, ձևավորման հետ կապված հարցերի քննությանն է նվիրված 1988 թ. վերջերին լույս տեսած «Ուրարտու-Հայաստան» գրքույկը (հեղինակներ Բ. Ն. Առաքելյան, Գ. Բ. Ջահուկյան, Գ. Խ. Սարգսյան), որը ներկայացված է ընթերցողների ուշադրությանը։

Հայոց պատմության մյուս կարևորագույն հարցը հայկական պետականության առաջացման և հետագա ճակատագրի հարցն է։ Այն խոշոր և հրատապ է, մանավանդ այն պատճառով, որ ժամանակակից թուրքական պատմագրությունը և նրան ձայնակից ադրբեջանական մի քանի պատմաբաններ՝ Զիա Բունիաթովը, Ֆարիզա Մամեդովան և ուրիշներ, զանց առնելով պատմական անառարկելի իրականությունը, ճգնում են առհասարակ ժխտել հայկական պետականության գոյությունը, հնարավոր համարելով ճանաչել միայն Տիգրան II-ի, մասամբ և հայ Առշակունիների թագավորությունը մինչև 387 թ.։

Հայկական պետականությունն առաջացավ Ուրարտուի անկումից անմիջապես հետո՝ մ. թ. ա. VI դարի սկզբներին։ Դա հայտնի և անառարկելի փաստ է։ Այդուհանդերձ առաջին Երվանդունիների պետության առաջացման մանրամասնությունների քննությունը կանգնած է պատմաբանների առջև։ Սկզբում հայկական պետությունը գտնվում էր Մարական թագավորության,

իսկ մ. թ. ա. VI դարի կեսերից մինչև 520-ական թթ. վերջը՝ Աքեմենյան Իրանի գերիշխանության ներքո։

Մ. թ. ա. VI դարի 20-ական թթ. մինչև IV դարի վերջերը հայ պետականություն փաստորեն գոյություն չուներ և Հայաստանը գտնվում էր Աքեմենյան տերության 20 սատրապությունների թվում, իսկ տեղական կառավարության մարմինները ենթակա էին Աքեմենյան արքային։ Այդ վիճակը տևեց մինչև Աքեմենյան խոշոր տերության անկումը մ. թ. ա. 331 թ., Ալեքսանդր Մակեդոնացու զորքերի հարվածների ներքո։ Այնուհետև առաջացան Մեծ Հայքի, Փոքր Հայքի և Ծոփաց աշխարհի հայկական թագավորությունները։ Արտաշես I թագավորի օրոք (189—160) Հայկական թագավորությունը դարձել էր հեղինակավոր թագավորություն, որը փաստորեն քաղաքականապես միավորել էր ամբողջ Հայաստանը, իսկ Ծոփքի հայկական թագավորությունը, թեև պահպանվում էր, բայց ճանաչում էր Մեծ Հայքի թագավորության գերադասությունը։ Մ. թ. ա. 94 թ. Տիգրան II-ը Ծոփքը ևս միացրեց Մեծ Հայքի թագավորությանը։

Հայկական թագավորությունը Տիգրան II-ի օրոք (95—55) դարձել էր հին աշխարհի հզոր, տնտեսապես և մշակույթով զարգացած պետություններից մեկը։ Հետագայում, Արտավազդ II-ի (55—34) և Արտաշեսյան հաջորդ թագավորների օրոք հայկական թագավորությունը դիմագրավեց աշխարհակալ Հռոմին, բայց 1 թվականին ընկավ։

Կես դարից ավելի իրար հաջորդող անկայուն և անցողիկ թագավորություններից հետո մ. թ. 65 թ. երկրում հաստատվեց Արշակունիների հայկական թագավորությունը։ Հայկական գահի վրա պարսից Վաղարշակ արքան թագավոր դրեց իր եղբորը՝ Տրդատին, որին իբրև Հայոց թագավոր ճանաչեցին և՛ պարթև Արշակունիները, և՛ նրանց մրցակից Հռոմեական կայսրությունը։

Թվում էր, թե Հայոց թագավորը լինելու էր «երկու տիրոջ ծառա», սակայն Հայաստանը տնտեսապես նկատելիորեն բարգավաճ երկիր էր։ Մովսես Խորենացին վկայում է. «ասում են թե Արտաշեսի ժամանակ մեր Հայոց աշխարհում անմշակ հող չմնաց, ո՛չ լեռնային և ո՛չ դաշտային, այնքան շենացել էր երկիրը»։ Բարձր զարգացման էին հասել արհեստներն ու առևտուրը, առաջացել էին շուրջ քսան քաղաքներ, երկիրը խոշոր դեր էր խաղում միջազգային առևտրի ասպարեզում։ Հայաստանն ուներ բավականաչափ մարտունակ բանակ, բաղկացած հեծյալ և հետևակ զորագնդերից։ Տրդատ I թագավորը և նրա հաջորդները, հենվելով երկրի տնտեսական և ռազմական զորության վրա, պահպանում էին երկրի անկախությունը, հաջողությամբ դիմագրավում օտար նվաճողների ոտնձգություններին։

Որոշ հեղինակներ, նկատի ունենալով Տրդատի Արշակունի ծագումը, երբեմն հայկական թագավորությունը անվանում են պարթև Արշակունիների թագավորության «փոքր ճյուղ», որը միանգամայն սխալ է։ Հայկական թագավորությունը ինքնուրույն էր և եթե I, II դդ. դաշնակցում էր Պարթևներին, ապա այն պատճառով, որ սպառնալիքը երկրին գալիս էր դեռևս հզորաղոր Հռոմից, իսկ III—IV դդ., ընդհակառակը, դաշնակցում էր արդեն թուլացած Հռոմին, որպեսզի կարողանա դիմագրավել հզորացած Սասանյան Պարսկաստանին։

Արշակունյաց Հայկական թագավորությունը հարատևեց մինչև 428 թ.։ Այնուհետև հայ ժողովուրդը չորս և կես դար շարունակ միմյանց հաջորդող ապստամբություններով մաքառեց իր տնտեսական, քաղաքական, մշակութային և դավանական ինքնուրույնության և ինքնության պահպանման և անկախության վերականգնման համար։ Եվ այդ պայքարը պսակվեց հաջողությամբ՝ 885 թ. վերականգնվեց Հայկական պետությունը՝ առաջացավ Բագրատունյաց հայոց թագավորությունը և իր հռչակավոր Անի մայրաքաղաքով գոյատևեց մինչև 1045 թ.։ Ֆեոդալական իրականությանը բնորոշ օրինաչափությամբ X դարում առաջացել էին նաև Բագրատունիների պետության գերադասությունը ճանաչող Վասպուրականի (908—1021), Կարսի (963—1065), Կյուրիկյան կամ

Տաշիր-Զորագետի (972—1113), Սյունյաց (987—1170) տեղական թագավորությունները, որոնցից վերջինը՝ Սյունյաց թագավորությունը գոյատևեց մինչև 1170 թ., այսինքն պահպանվեց Անիի Բագրատունիների համահայկական նշանակություն ունեցող թագավորության անկումից (1045 թ.) հետո ևս 125 տարի։

Հայկական թագավորության կենսունակությունը յուրովի դրսևորվեց բուն Հայաստանի սահմաններից դուրս՝ Միջերկրական ծովի արևելյան ափին Կիլիկյան Հայկական թագավորության առաջացմամբ։ Պատմական անցքերի բերումով Կիլիկիայում գոյացել էր հայկական հոծ բնակչություն, իր հոգատերերով, իշխանավորներով և 1080 թ. առաջացավ Կիլիկիայի հայկական իշխանությունը, որը անկախություն ձեռք բերելով Բյուզանդական կայսրությունից, 1198 թ. ձևավորվեց որպես բավականաչափ կայուն, զարգացած և Մերձավոր Արևելքի ու եվրոպական երկրների հետ քաղաքական, առևտրատնտեսական, նաև մշակութային ընդարձակ կապեր ունեցող անկախ պետություն, որը գոյատևեց մինչև 1375 թ.։

Այսպիսով, Հայկական պետականության գոյության իրողությունը ժխտելը ոչ այլ ինչ է, եթե ոչ անհեթեթ կամայականություն, ինչպես և պատմությունը կեղծելու ակնհայտ դիրքավորում։ Պատմական իրողությունները չեն կարող և չպետք է դառնան հայեցողական կամայականության առարկա։

Հին Հայաստանի պետությունը ուներ իր սոցիալական կառուցվածքը։ Ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը, պրոֆեսորներ Խաչիկ Սամուելյանը, Սուրեն Հակոբյանը և ուրիշներ Հին Հայաստանի հասարակական կարգերը բնորոշում էին իբրև ֆեոդալական, թեև ընդունում էին ստրուկների անցողիկ խավի և տնտեսական գոյությունը։ Պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանը, ակադեմիկոսներ Սուրեն Երեմյանը, Գագիկ Սարդսյանը, տողերիս հեղինակը, Սիմոն Կրկյաշարյանը, Գևորգ Տիրացյանը և ուրիշներ Հին Հայաստանի հասարակական կարգերը դիտում են իբրև ստրկատիրական կարգեր։

Ըստ սոցիոլոգիական մոտեցման, այդ կարգերը պետք է բաղկացած լինեին իշխող ստրկատերերի և շահագործվող ստրուկների դասակարգերից։ Դա իհարկե ընդհանուր տեսական մոտեցում է, սակայն ինչպես պարզել են վերջին կեսդարյա ուսումնասիրությունները, ստրկատիրական հասարակությունը չի կարելի դնել սոցիոլոգիական սխեմայի տակ, քանի որ այդ հասարակությունը ունեցել է իր տարբեր դրսևորումները, որ միճակագրական մոտեցմամբ այդ բարդ հարցը չի կարելի լուծել։ Այստեղ առաջանում են հակասություններ սոցիալական բարդ կառուցվածքի, գյուղական համայնքի առկայության, շահագործողական հարաբերությունների այլազանության, պետության յուրահատուկ ձևերի, պետության և հասարակության փոխհարաբերությունների, հասարակական մտածողության՝ զաղափարախոսության և մշակույթի դրսևորումների ամենատարբեր հարցերում, որոնց քննական վերլուծությունը մեր հայկական իրականության մեջ դեռևս բավարար համարել չի կարելի. հետևաբար, վերլուծական ուսումնասիրությունները պետք է շարունակվեն։

Միայն ստրկատիրական հասարակության հարցը չէ, որ հաճախ առաջադրվել և քննարկվել է հասարակական-տնտեսական ֆորմացիաների պարզունակ ընկալված սխեմայով։ Նույնը վերաբերում է նաև ավատատիրական՝ ֆեոդալական հասարակությանը։ Դեռևս հիմնավոր լուսաբանման կարոտ է ֆեոդալական կարգերի ձևավորման հարցը Հայաստանում։ Հասարակական-տնտեսական ֆորմացիաների տեսության համաձայն պետք է հասարակությունը բաժանված լիներ խոշոր հոդատեր-ճորտատերերի շահագործող և նրանցից կախված ճորտերի շահագործվող դասակարգերից։ Բայց պարտադի՞ր է, որ խոշոր հողատիրությունը անպայման լինի ճորտատիրական։ Չէ որ գյուղացիների ֆեոդալական կախվածության տարբեր ձևեր են գոյություն ունեցել։ Միջնադարյան Հայաստանում ճորտերը ոչ ստվար՝ փոքրաթիվ խավ են եղել, իսկ նրանց կողքին հոծ բազմություն են կազմել հողատերերի տիրույթներում բնակվող և ֆեոդալական կախման ու շահագործման տարբեր ձևերի ու եղանակների և սոցիալական շերտավորման ենթակա շինականները, որոնք ձևականորեն հողատեր չլինելով, փաստորեն իրենց հողակտորների տերերն

էին և հողաբաժանությունը դարերով առաջացած ավանդությամբ կատարում էին գյուղական համայնքները։ Միջնադարյան Հայաստանում կային նաև ազատ հողատեր գյուղացիներ։ Ավելի շերտավորված էր մանավանդ քաղաքային բնակչությունը։ Ուրեմն հասարակության դասակարգային-սոցիալական շերտավորվածության պարզունակ կաղապարը առհասարակ և մասնավորապես Հայաստանում չի համապատասխանում պատմական բազմադիմի և հարուստ իրադրությանը։ Պարզ է, որ այս հարցերը նույնպես դեռևս կարոտ են բազմակողմանի և վերլուծական լուսաբանության։

Խոշոր և բազմազան են թերությունները մեր ժողովրդի բազմադարյան պատմության ուսումնասիրության տարբեր բնագավառներում։ Այստեղ կան բաց մնացած էջեր, նվազ ուսումնասիրված ժամանակաշրջաններ կամ հարցեր, տեսական, գաղափարական վրիպումներ, սխալներ և այլ թերություններ։ Երկար ժամանակ իշխել է քաղաքական սոցիոլոգիական դոգմատիկ մոտեցումը, որը շատ դեպքերում խանգարել է հասարակական երևույթների ճիշտ գնահատությանը, մեր ժողովրդի քաղաքացիական պատմությունը ավելի հարուստ ու գիտական բարձր մակարդակով ներկայացնելուն։ Այն խանգարել է նաև հասարակական, քաղաքական, պետական, ռազմական, մանավանդ կրոնական մի շարք հարցերի, ինչպես նաև գործիչների ճիշտ և ըստ արժանվույն գնահատմանը։

Մենք ընդհուպ մոտեցանք կրոնի՝ ամեն մի ժողովրդի պատմության մեջ և կյանքում խաղացած դերին ու նշանակությանը։ Նկատելիորեն անտեսվել է հայերի հավատի պատմաքաղաքական, գաղափարական դերն ու նշանակությունը մեր երկրի ինքնուրույնության և մշակութային զարգացման հարցերում։ Երբ հարկավոր էր դիմագրավել Սասանյան Իրանի նվաճողական քաղաքականությանը, որի համար նրանք օգտագործում էին նաև հայերի և պարսիկների դավանաբանական մերձավորությունը, հայերը իրենց ինքնուրույնությունը և ինքնությունը պահպանելու համար ընդունեցին քրիստոնեությունը և տարանջատվեցին նրանցից։

Հայտնի է, թե ինչ դեր կատարեց հայերի քրիստոնեական հավատը հինգերորդ դարի ճակատագրական անցքերի և Ավարայրի ճակատամարտի օրերին։ Իսկ երբ քրիստոնյա Բյուզանդիան էր փորձում քաղաքական և այլ նպատակներով օգտագործել հայերի հավատակցությունը, հայերը մերժեցին Բյուզանդական կայսրության որդեգրած քաղկեդոնական երկաբնակ դավանանքը և ընդունելով միաբնակությունը, այս անգամ տարանջատվեցին Բյուզանդիայից և դիմագրավեցին նրա ոտնձգություններին։ Հայերի որդեգրած դավանաբանական ուղղությունը՝ դոգման նույնպես իր դերն ու նշանակությունը ունեցավ։

Ավելի ուշ, VII—IX դդ., երբ արաբական հզոր խալիֆայությունը իբրև աշխարհակալության գաղափարական-քաղաքական զենք լայնորեն օգտագործեց իսլամը, Հայաստանի հարևան որոշ երկրներ՝ Ասորիքը (Սիրիան), Աղվանից աշխարհը, երբեմնի հզոր Սասանյան Իրանը ընկրկեցին նրա առջև, իսկ Հայաստանը և Վրաստանը պահպանեցին իրենց քրիստոնեական դավանանքը և մշակութային ինքնությունն ու զարգացման հնարավորությունները։ Հայտնի իրողություն է, որ սասանյան, արաբական տիրապետությունների ժամանակներում Հայաստանը պահպանում էր իր ինքնությունը, տեղական իշխանությունները, զորաջոկատները, իսկ եկեղեցին, կաթողիկոսությունը հայ պետականության բացակայության պայմաններում ներկայացնում էին համայն հայության շահերը տարբեր, նաև քաղաքական, դիվանագիտական ասպարեզում։ Իսկ որքան մեծ է եղել եկեղեցու դերը հայ դպրոցի, կրթության, գրի, գրականության, մշակույթի և արվեստի բնագավառներում։ Հայկական եկեղեցին, վանքերը հանդիսանում էին հասարակական մտքի, գիտության և մշակույթի կենտրոններ, իսկ հոգևորականությունը՝ միջնադարյան հայ մտավորականությունը։ Զգալի է եղել եկեղեցու դերը նաև ժողովրդի առօրյա կենցաղի, ընտանեկան, բարոյական կյանքի կարգ ու կանոնի պահպանման գործում։ Եկեղեցական կանոնները դարեր շարունակ օրենքի և օրինականության դեր են կատարել։

Այս ամենը նկատելիորեն անտեսվում էր պատմագիտության մեջ պարտադրվող քաղաքական-սոցիոլոգիական նկատառումներով։ Զարմանալի չէ, որ խորհրդային հայ պատմագիտությունը մինչև օրս չի անդրադարձել հայ եկեղեցու պատմությանը, այլև դրա մտադրությունն իսկ չի ունեցել։

Անտեսվել են երկրում առաջացած աղանդավորական շարժումների կրոնագաղափարական շարժառիթները և ընդհակառակը՝ միակողմանիորեն շեշտվել է նրանց սոցիալական, ժողովրդական բովանդակությունը։ Պավլիկյան և Թոնդրակյան շարժումները դիտվել են առավելապես դրական տեսանկյունով, նկատի ունենալով, որ դրանք հակաֆեոդալական բնույթ են կրել։ Սակայն աչքաթող են արվել նրանց գաղափարական ու գործնական հետամնացությունն ու պատմական հեռանկարից զուրկ լինելը, այն, որ այդ շարժումները երբեմն նայում էին ոչ թե դեպի առաջ, այլ դեպի ետ։ Թոնդրակյան շարժումը XI դարում ավելի խորացրեց հայկական հասարակության քաղաքական հակասություններն ու ճգնաժամը, թուլացրեց երկրի պաշտպանունակությունը սելջուկյան Թուրքերի նվաճողական արշավանքների նախօրեին։

Մինչև սելջուկյան արշավանքները Հայաստանն ապրում էր հասարակական-տնտեսական և մշակութային նշանակալից զարգացում։ Սելջուկյան տիրապետության շրջանում՝ XI դարի կեսերից մինչև XII դարի կեսերը՝ շուրջ մեկ դար այդ զարգացումը կասեցվեց։ Սելջուկյան Թուրքերը անխնա կողոպտեցին Հայաստանի և հարևան երկրների քաղաքները, մի շարք քաղաքներ ավերվեցին։ Նրանք ստեղծեցին ճնշիչ վարչակարգ, սահմանեցին ծանր հարկեր, փորձեցին նաև նվաճված ժողովուրդների վզին փաթաթել իրենց հետամնաց քոչվորական տնտեսաձևը, բայց հաջողություն չունեցան։ Որքան էլ ծանր էր սելջուկյան տիրապետությունը, որքան էլ դանդաղել էր նվաճված երկրների հասարակական-տնտեսական և մշակութային զարգացումը, այնուամենայնիվ այն չընդհատվեց, իսկ XII դարի II կեսում, մանավանդ վերջերին, նոր վերելք ապրեց։ Հայկական ֆեոդալական տները և զորաջոկատները մեծ մասամբ պահպանվեցին։

Վրաստանում պահպանվում էր Թագավորական իշխանությունը, որն աստիճանաբար զորեղացավ, մանավանդ Դավիթ IV Թագավորի օրոք (1089—1125), երբ տեղի ունեցավ վրացական հողերի միավորումը միասնական Թագավորության մեջ։ Հենց այդ ժամանակ էլ սկսվում է հայ-վրացական համագործակցությունը սելջուկների դեմ մղվող պայքարում, որն իր բարձրակետին է հասնում վրաց Թամար Թագուհու օրոք (1184—1213), ձևավորվում է վրաց-հայկական ռազմաքաղաքական դաշինքը՝ վրացական արքունիքի և հայկական Զաքարյան իշխանությունների միջև։ Դժվար է գերագնահատել այդ դաշինքի պատմական խորհուրդն ու նշանակությունը, որը դեռևս կարոտ է հանգամանալից և խորազնին ուսումնասիրության։ Այժմ նշենք, որ այդ դաշինքի և վրաց-հայկական ռազմաքաղաքական համագործակցության շնորհիվ հյուսիս-արևելյան Հայաստանը ազատագրվեց սելջուկյան տիրապետությունից և ձևավորվեցին Զաքարյան հայկական իշխանությունները, իսկ Վրաստանը, համագործակցելով հայերի հետ, ավելի զորեղացավ և հաջողությամբ դիմագրավեց սելջուկյան ամիրայությունների միացյալ ուժերի ռազմաքաղաքական ոտնձգություններին։

XII դարի վերջերից մինչև XIII դարի 30—40-ական թթ. տեղի ունեցավ նոր նշանակալից վերելք։ Վաղուց է ծագել այդ ժամանակաշրջանի՝ X—XIII դդ. հայ մշակույթի զարգացման և բնույթի գնահատման հարցը։ Որոշ գիտնականներ այն բնորոշում են իբրև վերածնություն, մյուսները հակված են այն դիտելու իբրև զարգացած ֆեոդալիզմին բնորոշ երևույթ՝ օժտված քաղաքային, այսպես կոչված բյուրգերական մշակույթի հատկանիշներով, կամ համարում էին նախառենեսանսյան երևույթ։ Տարիներ առաջ նշված խնդիրը դարձավ գիտական լուրջ բանավեճերի առարկա, որոնք, սակայն, ընդհատվեցին, այդ կարևոր հարցը լուծում չստացավ, մնաց առկախ և պատմաբաններն ու գրականագետները այն ներկայացնում են տարբեր և հակասական գնահատությամբ։ Ժամանակն է վերանորոգել բանավեճերը՝ նոր մտածողությամբ և ավելի հիմնավոր ձևով։ Մանավանդ եթե հաշվի են առնը-

վում Կիլիկյան հայկական թագավորության մեջ տեղի ունեցած մշակութային զարգացման փաստերը։

Զաքարյան իշխանությունների գոյության և Վրաստանի հետ համագործակցության ժամանակաշրջանում՝ XII դարի վերջերին և XIII դարի առաջին կեսում տեղի ունեցող տնտեսական և մշակութային վերելքը ընդհատվեց մոնղոլական արշավանքների և տիրապետության հաստատման հետևանքով։ Եթե սելջուկյան հետամնաց ցեղերին չհաջողվեց իրենց քոչվորական տնտեսաձևը փաթաթել նվաճված ժողովուրդների, մասնավորապես հայերի և վրացիների վզին, ապա այդ իրականացրեցին մոնղոլները, որոնք ստեղծեցին դաժան վարչակարգ և հարկային կեղեքման ծանր ու քայքայիչ համակարգ, ուղեկցված ապօրինություններով և կամայականություններով։ Երկրում ծայր առած տնտեսական, քաղաքական և մշակութային անկումը շարունակվեց նաև հետագայում։ XIV դարում ընկավ Կիլիկյան թագավորությունը։ XV—XVII դդ. եղան թուրքմենական ասպատակությունների, ապա թուրք-պարսկական պատերազմների և տիրապետության քայքայիչ ժամանակաշրջան։ Այս դարերի վայրիվերումներով, ավերածություններով, արտագաղթերով լի պատմությունը դեռևս հարկ եղածին չափով ուսումնասիրված չէ, դեռևս կան տնտեսական, քաղաքական և մշակութային բաց մնացած շատ էջեր, ուստի այս դարերի հիմնավոր ուսումնասիրությունը ևս հանդիսանում է պատմագիտության կարևոր անելիքներից մեկը։

Չի կարելի գոհացուցիչ համարել միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության վիճակը։ Միջնադարյան հայ մշակույթը ազգային խոշոր ժառանգություն է, որն արժանացել է նաև միջազգային ճանաչման՝ իբրև համամարդկային մշակույթի մի կարևոր էջ։ Հայ մշակույթի տարբեր բնագավառներին նվիրված աշխատություններ, առավելապես հայերեն լեզվով, իհարկե կան, սակայն դեռևս չկան ամբողջական ընդհանրացնող աշխատություններ, մանավանդ օտար լեզուներով, որոնց ծրագրումը և իրականացումը անհետաձգելի խնդիր է։

Ոչ պակաս կարևոր խնդիր է Հայաստանի պատմաաշխարհագրական ատլասի ստեղծումը, որը բաղկացած լիներ բազմաթիվ քարտեզներից և ուղեկցվեր սկզբնաղբյուրներով հիմնավորված համապատասխան բնագրով։ Ատլասի ստեղծումը հրատապ է մանավանդ այն պատճառով, որ մեր արևելյան և արևմտյան թուրքախոս հարևանները պատմական Հայաստանի տարածքը չափում ու ձևում են առանց որևէ հիմքի՝ իրենց կամեցածին պես, առաջադրելով նաև հակագիտական տեսակետներ։ Առհասարակ մեր պատմության և մշակույթի մի շարք հարցերին տրվել են ոչ գիտական, հաճախ միտումնավոր մեկնաբանություններ, որոնց առթիվ մեր վերաբերմունքը պետք է լինի ստույգ, գիտականորեն հիմնավոր, քննական և արդարացի։ Էլ չենք ասում, որ փորձեր են արվում յուրացնելու մեր հոգևոր և նյութական մշակույթի աչքի ընկնող շատ հուշարձաններ։ Պատասխանը պետք է լինի այդ հուշարձանների խորը գիտական և հիմնավոր լուսաբանությունը, անհերքելի ապացույցը, որ դրանք կազմում են հայկական մշակույթի անբաժանելի մասը։

Խորհրդային, նաև հայկական պատմագիտության բնագավառում տասնամյակներ շարունակ արմատացած են եղել դոգմատիկ մոտեցումը, սխեմատիկ պարզունակությունը, հաճախ նաև հակագիտական մեկնաբանությունները, իսկ անհատի պաշտամունքի ժամանակներում այդ երևույթը ծայրահեղությունների հասավ։ Պատմագիտական հարցերի նկատմամբ վերաբերմունքը պարտադրվում էր և առաջադրվում էին պատրաստի բանաձևեր։ Անհրաժեշտ է վերանայել ու շտկել սխալներն ու թերությունները։

Պատմաբանների ուշադրությունից չի վրիպել ազգային-ազատագրական շարժումների հարցը, սակայն այստեղ ևս եղել են խոշոր թերություններ և խեղաթյուրումներ, մանավանդ XIX դարի երկրորդ կեսին և XX դարին վերաբերող հայկական շարժումների, հոսանքների և կուսակցությունների գործունեության և քաղաքական գնահատության վերաբերյալ։ Այս հարցերում պաշտոնականացված քարացած տեսակետների վերանայումը արգելակվել է կամ բացասական-քաղաքական պիտակներով է կնքվել։ Նկատենք, որ այժմ արդեն

կատարվում են քայլեր նշված վիճակը շտկելու ուղղությամբ։ Որպես դրա օրինակ կարելի է բերել «Պատմա-բանասիրական հանդեսում» վերջերս տպագրված պրոֆ. Մ. Դ. Ներսիսյանի հոդվածը Հնչակյան կուսակցության մասին (տե՛ս 1987 թ. № 3)։

Հարկ է նշել, որ պատշաճ ուշադրություն չի նվիրվում հայ պատմագրության ավագ սերունդների թողած ժառանգության քննական ընկալմանը։ Վաղուց առաջադրվել, յուրովի, հաճախ միանգամայն ինքնատիպ և արդարացի լուծում են ստացել մի շարք պատմագիտական, աղբյուրագիտական հարցեր, որոնց անտեսումը առաջացնում է սերունդների գիտական ժառանգության հաջորդական կապի խզում։

Պատմական խոշոր նշանակություն ունեցող իրողություն հանդիսացավ հայկական պետականության վերականգնումը 1918 թ., դարեր առաջ կործանված լինելուց հետո։ Թվում էր, թե այդ նշանակալից ակտը պետք է իր արժանի գնահատականը ստանար խորհրդային հայ պատմագրության մեջ, սակայն տեղի ունեցավ հակառակը։ Պատմաբանները, քաղաքական գործիչների հետ միասին, չկամեցան ճանաչել այդ պատմական անառարկելի ճշմարտությունը։ Դա սովորական սխալ չէր, այլ քաղաքական բնույթի միտումնավոր հակապատմական մոտեցում, որը միայն վերջերս է մերժվում և շտկվում, բայց դա մեծ և խիստ կարևոր հարց է, որը պետք է բազմակողմանի խորը և շիտակ ուսումնասիրության առարկա հանդիսանա։

Անհատի պաշտամունքի ժամանակաշրջանում եղել են ոչ միայն արգելված թեմաներ, այլև հրատարակվել են աշխատություններ և գրքեր, որոնք շարադրված են պատմական անցքերի խեղաթյուրմամբ կամ թյուր մեկնաբանությամբ՝ համաձայն իշխող մտայնության (իսկ պատրաստի, այն էլ պարտադրվող կաղապարը կար՝ ԽՄԿԿ պատմության ստալինյան տեսանկյունով և խմբագրությամբ լույս տեսած գրքի անմիջական ազդեցությամբ), բայց դեռևս մնում են հրապարակում, անգամ լուրջ վերանայման չեն ենթարկվել նրանցում տեղ գտած պատմության սխալ պարբերացումը և խեղաթյուրումները։ Դրանք քննադատության չեն դիմանում ինչպես վերակառուցման, նույնպես և նոր մտածողության տեսանկյունից։ Մինչդեռ այդ քննադատությունն էլ համարյա չի իրականացվում։ Հրապարակի վրա են, օրինակ, Հայաստանի գյուղատնտեսության զարգացմանը և ստալինյան համատարած կոլեկտիվացմանը նվիրված ներբողական, փառաբանական աշխատությունները, մինչդեռ իր ժամանակին էլ պարզ էր, իսկ այժմ ցայտուն կերպով բացահայտված է, թե ինչպիսի մեծ վնասներ է հասցրել համատարած կոլեկտիվացումը Հայաստանի երկրագործությանն ու անասնապահությանը, բայց գլխավոր շարիքն անգամ դա չէր, այլ այն, որ հիմնական և առավել ակտիվ արտադրող գյուղացիությունը, մանավանդ միջակ գյուղացին, անջատվեց հողից՝ աքսորվեց և մեծ մասամբ ոչնչացավ։ «Հողը որբացավ», ինչպես դիպուկ կերպով ասում են գյուղացիները, իսկ կոլտնտեսություններն ու սովխոզները, իրենց քննությունը չբռնած համակարգերով և գործելակերպով չէին կարող շտկել դրությունը։ Պատմաբանները և տնտեսագետները այս հարցերին անդրադառնում են թեթևակի, կիսաբերան, պակասում են հիմնավորված ու վճռական առաջարկները։

Իսկ ինչպիսի չափեր ընդունեցին ստալինիզմի նյութած բռնությունները Հայաստանում, որի զոհը դարձան կուսակցական, պետական, հասարակական առավել ակտիվ գործիչները, տեխնիկական մտավորականությունը, գիտնականները։ Կարելի է ասել խզվեց սերունդների հաջորդական կապը, թագավորեց վախը, սովորական դարձան մատնությունն ու կեղծիքը և այլ բացասական երևույթները։ Իսկ ինչո՞վ և ինչպե՞ս կարելի է չափել բռնությունների հասցրած հասարակական, տնտեսական, քաղաքական, մտավոր, մշակութային, բարոյական և հոգեբանական վնասները։ Սրանք հարցեր են, որոնց չպետք է վրիպեն գիտնականների ուշադրությունից։

Ստալինիզմի տարիների բացասական երևույթներից մեկն էլ մեր ինքնամեկուսացումն էր, կապերի համարյա խզվածությունը արտասահմանի հետ, իսկ մեզ, հայերիս համար՝ կապերի խզումը պատմական ճակատագրի

բերումով աշխարհով մեկ սփռված մեր ազգակիցների հետ։ Այժմ վերականգնվում են այդ կապերը, որոնք պետք է խորացվեն և ավելի արդյունավետ դառնան տարբեր ուղղությամբ նաև գիտության, այդ թվում և հայագիտության բնագավառում, մանավանդ արտասահմանում առաջացել են մի շարք հայագիտական կենտրոններ և դպրոցներ։

Այժմ բացառիկ կարևորություն է ստացել ազգային և ազգամիջյան փոխհարաբերությունների հարցը։ Համարվում էր, որ այն իբրև թե դրական լուծում է ստացել միութենական մասշտաբով։ Մինչդեռ այդ «լուծումը» իրականացված է ոչ թե ազգերի ինքնորոշման լենինյան, այլ ավտոնոմիայի ստալինյան սկզբունքներով։ Չի կարելի ժխտել խորհրդային ժողովուրդների բարեկամության զրսևորումները տնտեսության և մշակույթի բնագավառներում։ Փաստ է, որ խորհրդային ժողովուրդների ջանքերի համադրությունը և բարեկամությունը թիկունքում թե ռազմաճակատում Հայրենական պատերազմում մեր տարած հաղթանակի գրավականներից մեկն էր։ Այդուհանդերձ ազգային հարցը մեր միության մեջ շատ բնագավառներում դեռևս բավարար լուծում չի ստացել։ Այդ են վկայում Խորհրդային Միության տարբեր մասերում առաջացած ազգային շարժումները, իսկ մեզ մոտ այն ցայտուն կերպով դրսևորվեց ղարաբաղյան շարժմամբ և սումգայիթյան ողբերգությամբ։ Ղարաբաղյան շարժումը ազգային հարցի նորովի և խելացի լուծման ահազանգը հանդիսացավ։

Ղարաբաղյան շարժումը արդարացի, կարելի է ասել համազգային շարժում էր, հարկավոր էր այն գլխավորել, սակայն ՀԿԿ Կենտկոմի նախկին ղեկավարությունն այն անուշադրության մատնեց։ Տեղի ունեցավ խզում շարժման և հանրապետության ղեկավարության միջև, իր անցանկալի հետևանքներով հանդերձ։ Շարժումը Հայաստանում և Ադրբեջանում ուղեկցվեց անկանխագուշակելի դեպքերով, զանգվածային բնույթ կրող գաղթերով, որոնք ծանր հարված հասցրեցին հայ-ադրբեջանական դրացիական փոխհարաբերություններին, որոնց լարվածությունը, ցավոք, շարունակվում է։ Հայտնի է, որ նախապատրաստվում է ազգային և ազգամիջյան հարաբերություններին վերաբերող հարցի քննարկումը ԽՍՀՄ Կոմկուսի Կենտկոմի պլենումում։ Հուսանք և սպասենք։

Ազգային հարցի և ազգամիջյան փոխհարաբերությունների հետ սերտորեն կապված է ինտերնացիոնալիզմի հարցը։ Դա մի բարդ հարց է, որն ունենում է ամենաբազմազան դրսևորումներ՝ կյանքի, քաղաքականության, գաղափարախոսության, հոգեբանության, ուրիշ ժողովուրդների նկատմամբ վերաբերմունքի տարբեր բնագավառներում։ Իրավական բովանդակությունից զուրկ լոզունգային ինտերնացիոնալիզմը հեռու է իսկական ինտերնացիոնալիզմից։ Ինտերնացիոնալիզմը ուրիշ ազգերի նկատմամբ հարգանքի, համերաշխության, նրանց արժանիքների, պատմության, մշակույթի ճիշտ գնահատության փիլիսոփայությունն է և գործնական բարեկամական վերաբերմունք, քաղաքականություն։ Ինտերնացիոնալիզմը և հայրենասիրությունը հակոտնյաներ չեն։ Ազգերը և ժողովուրդները պետք է ջանան հասնելու այդ երկու գաղափարների և իրողությունների անխառնվ միասնությանը։ Հայ ժողովրդի պատմական ճակատագիրը հնուց ի վեր նրան կապել է աշխարհի շատ ժողովուրդների, նրանց կյանքի ու մշակույթի հետ, ուստի հայ պատմաբանը պարտավոր է ըստ ամենայնի և խորազնին ուսումնասիրել այդ կապերը, որոնք ունեն ինչպես ազգային, նույնպես և միջազգային՝ ինտերնացիոնալ բովանդակություն։

Պատմագիտության, ընդհանրապես հայագիտության առջև ծառացած խնդիրները մեծ են ու բազմազան։ Դրանցից է մանավանդ հայերի ցեղասպանության հարցը։ Թուրքական պատմագիտությունը հակահայկական ծավալուն պրոպագանդա է մղում բազմաթիվ լեզուներով, ըստ որում ոչ միայն ցեղասպանության հարցի վերաբերյալ։ Հայերը համարվում են եկվոր ժողովուրդ, որոնք եկան և ասիմիլյացիայի ենթարկեցին ուրարտացիներին, մերժվում է հայկական պետականության գոյությունը միջին դարերում։ Հայկական մշակույթը համարվում է իրանական աքեմենյան, հունա-հելլենիստա-

կան, սասանյան, բյուզանդական, սելջուկյան, իրանական, ադրբեջանական, թուրքական, այլ խոսքով՝ ժխտվում հայկական ազգային մշակույթի գոյությունը։ Իսկ մենք ի՞նչ ենք հակադրում այդ ամենին՝ պատմական ճշմարտությունը բացահայտելու և պրոպագանդելու համար. դժբախտաբար քիչ բան, մանավանդ օտար լեզուներով։ Առհասարակ օտար լեզուներով հայ պատմագիտության, հայագիտության նվաճումների մասսայականացումը գտնվում է միանգամայն անբավարար վիճակում, մենք չունենք նույնիսկ այդ ուղղությամբ աշխատանք տանելու ծրագիր, որի անհրաժեշտությունը խիստ զգացվում է։

Հայկական պատմագիտական ուսումնասիրությունները հենվում են հաստատուն և հարուստ սկզբնաղբյուրների վրա։ Այդպիսի սկզբնաղբյուրներ են սեպագիր արձանագրությունները, հունարեն, լատիներեն, պարսկերեն, ասորերեն, արաբերեն և այլ լեզուներով գրքերը։ Ամենից առաջ հայկական պատմական մատենագրությունը, Հայաստանի և այլ երկրների արխիվներում պահվող նյութերը, վիմագիր արձանագրությունները, ձեռագրերը և նրանց հիշատակարանները, հայոց լեզուն իր բազմակողմանի տվյալներով, նյութական առարկայական հուշարձանները, որոնք բազմանում են հնագիտական պեղումների շնորհիվ, ազգագրական և բանահյուսական նյութերը, ինչպես և ժողովրդական ավանդություններն ու առասպելները։ Ուսումնասիրողը պարտավոր է հաշվի նստել այս ամենի հետ։ Հայ պատմական մատենագրության գլուխգործոցը Մովսես Խորենացու անգերազանցելի «Հայոց պատմությունն» է, նվիրված հայ ժողովրդի հնագույն և հին շրջանի պատմության քննությանը։ Հեղինակն ընդգրկել է հսկայական քանակությամբ փաստական նյութ, անդրադարձել է ամենաբազմազան հարցերի՝ հիացմունքի արժանի խորաթափանց քննական վերլուծական մոտեցմամբ, թևավոր խոսքով, հայրենասիրական շնչով։ Խորենացին օգտագործել է մեծ թվով գրավոր աղբյուրներ, նյութական հուշարձաններ, ավանդություններ, առասպելներ։ Խորենացին մեծ է, հանճարեղ, բայց այդ ամենով հանդերձ ժամանակակից ուսումնասիրողը չի կարող հրաժարվել քննական մոտեցումից և Խորենացու հաղորդած ամեն տեղեկություն ընդունել իբրև բացարձակ ճշմարտություն, ինչպես այժմ վարվում են ոմանք, անգամ Խորենացու բերած առասպելներն էլ ընկալում են տառացի, իբրև պատմական ստույգ իրողություն։ Խորենացին մեծ է նաև նրանով, որ մեզ է հասցրել մի շարք հինավուրց առասպելներ, որոնց մասին գրել է, որ կան առասպելներ, «որք զճշմարտութիւն իրաց այլաբանաբար յինքեանս ունին թաքուցեալ»։ Այսօրվա ուսումնասիրողը թող սովորի Խորենացուց քննական վերլուծությամբ գտնելու առասպելներում և ավանդույթներում «թաքուցեալ ճշմարտությունը»։ 1990 թ. հանդիսավոր ձևով նշվելու է Խորենացու «Հայոց պատմություն» հռչակավոր երկի ստեղծման 1500-ամյակը։ Նախատեսված միջոցառումների շնորհիվ Խորենացին և նրա անմահ երկը կարժանանան ամենաբարձր գնահատանքի և նոր փառքի։

Հարուստ է հայոց պատմական մատենագիտությունը։ Այն մեծ ու նշանավոր ժառանգություն է. արդեն հրատարակվել և ուսումնասիրվել են մի շարք գործեր, բայց մենք դեռևս չունենք նրանց գիտական բնագրերի ամբողջական շարքը, որը հարկ է սկսել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» գիտական բնագրով, որը պատրաստ է։

Գոհացուցիչ չէ վիճակը նաև մյուս սկզբնաղբյուրների ուսումնասիրության և օգտագործման ուղղությամբ։ Ամենից առաջ դրանք պետք է հարընտացնել, հետատոտել։ Դեռևս փակի տակ են գտնվում նորագույն պատմության շատ նյութեր արխիվներում, քիչ են օգտագործվում հայոց պատմությանը վերաբերող նյութերը արտասահմանյան երկրների աղբյուրներում և արխիվներում։ Նաև գիտական գրականության մեջ։ Չի կարելի անտեսել կատարված աշխատանքները։ Հրատարակվել են բազմաթիվ մենագրությունները, լույս է տեսել հայ ժողովրդի պատմության ութհատորյակը, որն արժանացավ պետական մրցանակի, այժմ պատրաստվում է հրատարակության «Հայ ժողովրդի պատմությունը» չորս հատորով, ռուսերեն լեզվով։ Դա լավ է, սակայն պատմագիտության բնագավառում արդեն քանի տասնամյակ շարունակ

նկատվում է ակտիվության բացակայություն, չեն երևում պատմագիտական միտքը զգաստացնող և առաջ մղող լուրջ գիտական գրքեր, գրախոսություններ։ Չեն կազմակերպվում հրատարակված գրականության և առանձին հարցերի քննարկումներ, բանավեճեր։ Այդ հարցում մեղք ունեն ինչպես ինստիտուտները, նույնպես և Պատմության և տնտեսագիտության բաժանմունքը։ Չկա պատմաբանների ե առհասարակ հայագետների հանդիպումների ու համատեղ աշխատանքի մի հարմար հավաքատեղի, այդ աշխատանքը ինքնահոսի մատնված հեղհեղուկ վիճակում է գտնվում՝ զուրկ կազմակերպական որևէ ձևից։ Այդ վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ ենք համարում հայ պատմագիտական ընկերության հիմնումը, ինչպես և Գիտնականների տան ստեղծումը, որտեղ կարելի լիներ իրականացնել ակտիվ գիտական, նաև պատմագիտական, հայագիտական աշխատանք՝ գիտական գործունեության վերակառուցման ե հրապարակայնության նշանաբանով։

Դիտության մեջ մեր օրերում լայն կիրառություն են ստացել հետազոտության մի շարք նորագույն մեթոդներ և տեխնիկական սարքավորումներ ու հարմարություններ, որոնք մեծապես նպաստում են ոչ միայն բնական, այլև հասարակական գիտությունների հետագա զարգացմանը։ Պետք է խոստովանել, որ այս ուղղությամբ հասարակական գիտությունները դեռևս լուրջ քայլեր չեն կատարել և հայտնի չէ, թե այս անցանկալի անդորրը ե՞րբ է խախտվելու։ Ժամանակակից գիտությունը ավելի ու ավելի համաշխարհային, համամարդկային բնույթ է ստանում։ Գիտական ինֆորմացիան հորդում է հեղեղի պես, ստեղծվել են նաև ինֆորմացիայի նորագույն միջոցներ ու մեթոդներ, որոնց կիրառությունը մեզանում գտնվում է դեռևս նախնական վիճակում։ Վերին աստիճանի լուրջ հարց է երիտասարդ հեռանկարային կադրերի պատրաստման հարցը, որի վիճակը չի կարելի գոհացուցիչ համարել։

Մեր պատմաբանները, սոցիոլոգները, տնտեսագետները և մյուս գիտնականները պարտավոր են բազմակողմանիորեն վերլուծել հասարակական գիտությունների առջև ծառացած խնդիրները և դառնալ գիտության ու հասարակական կյանքի վերակառուցման ակտիվ մասնակիցներ։